ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 6** քաղ. Աստանա

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ Սերբիայի Հանրապետության հետ բանակցություններ սկսելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ եւ 102-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ բանակցություններ սկսել՝ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու միջոցով, մի կողմից՝ Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների, մյուս կողմից՝ Սերբիայի Հանրապետության միջեւ:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին՝ հաստատել սույն Որոշման 1-ին կետում նշված բանակցությունների հրահանգները:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**